ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԽԱՆԹԱԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գարնանային հասար տարեշրջանը 5 ֆր. կամ 2 րբլ. ոս. թղթդրմ.

Առիթ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 10րդ շրջանի (94 օգոստ.—95 մայիս) բաժնորդագինն է 20 ֆր. կանխիկ, կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսի համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ ֆր. հաշուելով և 1895 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

ՀԱՏ ՏԱՐԻ ԹԻՒ 25

1894 ՀՈԿՏԵՄԲԵՐ 24

ՀՈԿՏԵՄԲԵՐ 12 (Հ. Տ.)

ՁՈՐԵԳԱՐԱԹԻ

Խմբագրութիւնը կընդունի երեք. օրեր

ԳՈՅԱՑՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։

Պարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրները։

Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։

Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureau x de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայրենասիրական ոգեւորութիւն. — Նամակ Ամերիկայի Միացեալ-Նահանգներէն (Նիւ Եորք). — Փիւրտերի եւ Հայերի արիւնահեղ կռիւ... Ռոմանիայի մէջ. — Հայեր ի Թիւրքիա. — Մարսէյլի պարսկական նոր հիւպատոսը. — Հայ լրագրութեան հարիւրամեակի պատկերը. — Թիւրքիահն յուներ. — Զարիճ հիւանդութիւնը. — Յանուցումներ. — Բանասիրական (Սասուն):

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈԳԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Թէեւ այդ վերնագիրը շատ խորհրդաւոր ընդհանուր մարդկութիւնն ու բովանդակ աշխարհը իրենց համար ազգ ու հայրենիք ճանչցողներին, բայց որովհետեւ մենք դիմում ենք նրանց որոնք իրենց յատուկ հայրենիքն ունին որը պաշտում են, ունին իրենց ազգային լեզուն որով խօսում ու գրում են, ունին իրենց յատուկ ազգային եկեղեցին որին հաւատում ու սիրում են, ուստի մեր խօսքը լինելու է այս վերջիններիս հետ, որոնց համար, ինչպէս արդէն ասացինք, հայրենիք, ազգ, կրօն ու լեզու շատ թանկ են, և որոնք սակայն չեն ատել ու արհամարհել երբէք ուրիշի հայրենիքն ու ազգութիւնը, լեզուն ու կրօնը, իրենցը ջերմ կերպով սիրելով հանդերձ։

Թողնելով ամբողջ մարդկութիւնը վերակազմելու մեծ հարցը որը իր կարգին, հանգամանքների ստիպողական ու բնական պահանջների համաձայն, իր լուծումը կ'ստանայ անշուշտ վաղ թէ ուշ, մենք մեր ուշադրութիւնը պարտաւոր ենք դարձնել այդ մարդկութեան մի փոքրիկ մասը կազմող մեր հայ ազգի ներկայ դառն կացութեան վրայ, որ մեզ համար խորին մտատանջութեան, լուրջ մտածողութեան միակ առարկան պէտք է լինի իր անմիջական ու շուտափոյթ լուծման անհրաժեշտութեամբը։

Հայերս ի՞նչ ենք ուզում անել մեզ համար...։ Անցան էլ այն ժամանակները երբ միայն գոռում գոչում էինք։ Ձառելու շրջանն անց է կացել։ Այսօր ամեն հայ գիտէ թէ ինքը ըստ բուկ է, ճնշուած, կեղեքուած, ստորացած, կեանքի ամենատեսակ դառնութիւնները մինչեւ յորեր խմած. այդ բոլորը գիտենք և բնական էր որ մի թեթեւ ցանկութիւն ղգայինք երբեւ մարդ ապրելու, երբեւ ազգութիւն պատուաւոր դիրք ունենալու համար ուրիշների առաջ. մենք այդ ցանկութիւն լիովին ունենալու տրամադիր ենք երեւում. անուրանալի է որ ցանկանում ենք վերկուած տեսնել մեր հայրենիքը, օտարի լծից խլպատառաժած. փափաքում ենք որ ազատ ու երջանիկ լինենք։ Բայց գիտե՞նք նաեւ որ ի՞նչ պէտք է անել այդ ցանկութիւնները, ըղձալի փափաքները իրականացած տեսնելու, երբեւ արդէն գոյութիւն ունեցող իրողութիւններ մեր առաջ պարզուած ունենալու համար. — Այդ կէտում մենք բոլորովին տարբեր դիրքի վրայ ենք գտնվում. թվում է թէ մենք չենք ուզում կամ չենք կարողանում մեր ամեն իղձերին զուգընթաց, համապատասխան մի ընթացք բռնել. չենք ըմբռնում, չենք որոշում մեր պարտականութիւնները գիտութեամբ կամ անգիտութեամբ, և այդ՝ նրա համար որ զուրկ ենք ճշմարիտ հայրենասիրական ոգեւորութիւնից, որը միայն կարող է մեր խաւար միտքը լուսաւորել, գործունէութեան լուրջ միջոցների հետ ծանօթացնել և անվհատ ու անյողդողդ դէպի առաջ մեզ մղել մեր հայրենիքի փրկութեան գործի ասպարիզում։ Խօսում, գրում, գոռում ենք թէ յեղափոխութիւն, ապատամբութիւն է հարկաւոր Հայաստանը փրկելու համար։ Այո՛, մի ազգի, մի ժողովրդի փրկութիւնը յեղափոխութեամբ, ապստամբութեամբ գլուխ է գալիս. անուրանալի մի ճշմարտութիւն է այդ։ Բայց մենք յեղափոխութիւն բառի մտքի խորը թափանցե՞լ ենք արդեօք և ի՛նչպիսի յեղափոխութիւն, ապստամբութիւն պէտք է լինի հայկականը։

Անվերն յայտնի է որ փրկութեան, ազատութեան մեծ գործը պահանջում մեծամեծ զոհեր, ծանր նուիրաբերութիւններ, որոնք պարփակվում են առաւելապէս կեանքի ու նիւթականի մէջ։ Այդ զոհողութիւնները նուիրաբերողը ուրիշ նպատակ չի կարող ունենալ բայց եթէ ձգտիլ յեղափոխելու ընդհանրութեան, և որ նոյնն է, իր գոյութեանը ջնաստակար համարուած ընկերական տիրող կարգերն ու սովորոյթները, և աւելի օգտակար, աւելի յառաջդիմական սկզբունքների վրայ դրութիւններ ստեղծել։ Հին կարգերը տապալելով՝ մեզ համար աւելի նպաստաւոր ու օգտակար կարգ ու կանոններ հաստատելու համար աշխատողները կոչվում են յեղափոխականներ, որոնք սակայն ամեն և կիրներում տարբեր գոյներով, ուղղութիւններով են երեւան գալիս, համաձայն իրենց միջավայրի հանգամանքների պահանջին։ Ներատքուստ բոլորովին միմեանց աննման են երեւում այդ յեղափոխականները, բայց իրականապէս, խոր քննութիւնից յետոյ, միմեանց գրեթէ չար և նման են բարոյական տեսակէտից, որը միայն ժողովրդի բարօրութիւնն ի նկատի ունի։ Յեղափոխականները (մեր

Թէեւ այդ վերնագիրը շատ խորհրդաւոր ընդհանուր մարդկութիւնն ու բովանդակ աշխարհը իրենց համար ազգ ու հայրենիք ճանչցողներին, բայց որովհետեւ մենք դիմում ենք նրանց որոնք իրենց յատուկ հայրենիքն ունին որը պաշտում են, ունին իրենց ազգային լեզուն որով խօսում ու գրում են, ունին իրենց յատուկ ազգային եկեղեցին որին հաւատում ու սիրում են, ուստի մեր խօսքը լինելու է այս վերջիններիս հետ, որոնց համար, ինչպէս արդէն ասացինք, հայրենիք, ազգ, կրօն ու լեզու շատ թանկ են, և որոնք սակայն չեն ատել ու արհամարհել երբէք ուրիշի հայրենիքն ու ազգութիւնը, լեզուն ու կրօնը, իրենցը ջերմ կերպով սիրելով հանդերձ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱՍՈՒՆ

(Շար. 24րդ բաւ. եւ վերջ)

Անցաւ մի քանի տարի. Հաջի-Դայիթի գործունէութեան արդիւնաւոր պատուղները փառաւորապէս վայելելուց յետոյ՝ կառավարութիւնն այնու ամենայնիւ դարձեալ չարաչարում էր նոյն անհաշտ աչքով նայել այդ մի բուռն հայ կարիճ լեռնցիների վրա։

Նրանց հետ մի անգամ եւս ճակատելու համար, նա մի կարեւոր առիթ էր որոնում. բայց հարկի խնդրից աւելի այլ եւս ի՞նչ յարմարագոյն առիթ պէտք է ներկայանար։

Ահա հին երգը հնչեցնելով, կառավարութիւնը ներկայ տարվայ յունիսի վերջերին կրկին բաց է անում սովորական կռիւների ասպարէզը. մի կողմից տաճկական խառնիճաղանճ զօրքը, միւս կողմից քրդական բարբարոս հրոսակները, առաջնորդները սրելով՝ դիմում են դէպի Սասունի անմատչելի ամրութիւնները։ Բայց այդ ամայի բարձրութիւնների վրա ապաստանած մարդկային մի քանի չուռնչ՝ սէմալցի ութ կարիճներ միայն, քաջութեամբ դիմադրելով, հալածում են այդ ահագին խմբին։

Սրանք կորագլուխ յետ մղվելով, կատաղութեամբ և ղուրանի երկպագուներին յատուկ վոքրոգութեամբ, ճանապարհին պատահած գիւղերի խաղաղ ու միամիտ բնակիչներից են լուծում իրանց անարդար վրէժը... աւերում, կոտորում և կողոպտում են ամեն ինչ, չը խնայելով ո՛չ մանուկների անմեղ ճիչերին և ո՛չ դժբաղդ կանանց։

Այժմ բաց անենք այն հինաւուրց քօղը, որի տակ ճարպիկ կերպով շատ անգամ ծածկվել են տաճկական յետին մտքերը։ Դա հարկի խնդիրն է։

Երկու խօսքով բաւականանանք պարզելու, թէ այդ հարկի խնդիրը միշտ եղել է մի պատրուակ, խարուսիկ գլխ՝ քօղարկված նպատակների ծառայելու համար։

Մօտ 20 տարի է, որ Սասունի գլխաւոր մի քանիսը հարկ չեն վճարում կառավարութեան։ Պէտք է ասել, որ այստեղ, բնազդումից առաջացած անկախութեան սէրը շատ աննշան դեր է կատարում. իսկ գլխաւոր պատճառը նոյն իսկ երկրի չքաւորութիւնն է, չքաւորութիւն, որ հետեւանք է մի կողմից երկրի քարքարոտ և անբերրի լինելուն, իսկ միւս կողմից՝ երկարատեւ կռիւներից առաջացած տնտեսական քայքայման։

Այնպէս որ սասունցիների հարկ չը վճարելու պատճառը ոչ թէ կամայական սովորութիւնն է, այլ միայն երկրի աղքատութիւնը։ Դեռ անցեալ տարվանից ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս որ այնտեղ սովամահ լինելու չատ դէպքեր են եղել. Եթէ նրանց միջոցները ներէին, հարկ կը տային անշուշտ. Դրան ապացոյց գաւառի մի քանի գիւղերը որոնք նոյնպիսի բնական ամրութիւններով են պատսպարված, և որոնց բնակիչները նոյն անկախութեան ոգով են օժտված, բայց հարկ վճարում են, որովհետեւ միւսների հետ համեմատելով՝ հարուստ են։

Եթէ ընդունենք մինչեւ անգամ, որ հարկի խնդիրը կառավարութեան կողմից մի պատրուակ չէ, այլ մի լուրջ գործ, այնու ամենայնիւ տաճիկների վարմունքը դարձեալ չէ կարող արդարանալ։

Այս դրութեան մէջ սասունցին, մշեցին այլ եւս ի՞նչպէս անտեսական և նոյն իսկ բարոյական տեսակէտով չը պաշարվեն։ Երբ քրտնաթոր ճակատի վաստակը, երբ հալալ աշխատանքի պտուղը ապարդիւն կորցնելու սարսուռը կծկում, չորացնում է աշխատաւոր մշակի ձեռները, այլ եւս կարո՞ղ է արդեօք տարօրինակ երեւալ պարբերաբար կրկնվող սովը, յետին աստիճանի չքաւորութիւնը, օրական պարէնի կարօտութիւնը...

Ահա այս է Սասունի ողբալի վիճակը։ Ցաւալին այն է, որ նոյն դրութեան մէջ հեծում են և նրա սահմանակից գաւառները. ներկայումս ամբողջ Մուշի դաշտ ահ ու սարսափի մէջ է...

Վ—ցի
(*Մշակ*).

ՊԻՐ ԲՈՍՓ, 10 Հոկտ. 1894

ԱՆՀԱՂԵՑՈՒՄՆԵՐ ՎՈՒՀԱՎԱՌԻ

Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՀՅՍԱՑ

Ամեն օր ստանում ենք նոր հեռագրեր Հայաստանի տարբեր կողմերից, որոնք ցույց են տալիս, որ ամենուրեք ձմեռը սկսվել է շատ վաղ և ուժգին։ Ամենուրեք ձյուն է գալիս, ցուրտ է, և ամենուրեք ձյունը շատ է։ Ձյունը ծածկել է ոչ միայն դաշտերը, այլև լեռները, ձորերը, ճանապարհները։ Ձյան պատճառով ճանապարհները գրեթե անանցանելի են դարձել։ Ձյունը ամենուրեք ծածկել է ոչ միայն գյուղերը, այլև ամբողջ տարածությունները

մանց նման որք երբ օտար երկիրներ կերթան, տեղական սովորութեանց հետեւելու հակամէտ կը լինին և կամենան իւրեանց եկեղեցւոյ կանոնները ճիշդ առ ճիշդ դործադրելու, մինչդեռ անոնցմով կրնան պարծիլ և օտարաց վրայ ալ պատկառանք ազդել։ Մ՚աղաքիա վարդապետ նաեւ իմաստակից քարոզ մը խօսեցաւ վարագայ խաչին վրայով. իրեն բնաբան առաւ Առաքելոյն այն խօսքը թէ «Ա՚յլ ինձ քաւ լիցի պարծիլ բայց միայն ի խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», և խաչին վնհ նշանակութիւնը բացատրեց ու յորդորեց մեզ լինել ճշմարիտ զինուորներ խաչին։

Ա.ՊԱՀ

ՓԻՐՏԵՐԻ ԵՒ ՀԱՅԵՐԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԿՌԻՒ ... ՌՈՒՄԱՆԻԱՅ ՄԷՋ

Պրայլա, 3/15 հոկտեմբեր 1894

Ինչպէս միշտ, այս անգամ ալ Քիւրտերն իրենց վայրենութեան մի նոր ապացոյց եւս տալ ուզեցին Ռումանիոյ նման մի երկրի մէջ ալ ուր արդարութիւն, ազատութիւն և հաւասարութիւն կը տիրեն։ Այդ վայրենաբարոյ մարդիկ իրենք զիրենք Թիւրքիոյ մէջ կարծելը են ուր ամեն բարբարոսութիւն ներելի է իրենց, մոռնալով որ այստեղ Եւրոպա է ուր ռոմանական կառավարութիւնը արդարութիւն միայն կը դործադրէ և Քիւրտերուն չողոքորթելու չափ հնաւաստանաւոր Թիւրքին պէս։

Երէկ (չաբաթ) երեկոյ (Ը. Ե.) ժամը 8ին, քաղաքիս Բուղա կոչուած պուլիվարդը արիւնալի տեսարան մի տեղի ունեցաւ զոր պարագ կը համարիմ տեղեկացնել Աւրւնիայի ընթերցողաց։

Պուլիվարդ Բուղայի վրայ կը դանուին պանդուխտներու մի քանի արճաճանները, որոնց մէջ են Քիւրտ Ալի չաուշի և նորա կից մշեցի Մէլիք չաուշի արճաճանները։ Շաբաթ եւ երեկոյ ժամը 7ին ժամանակները Քաղոր չաուշ անուն Բաղէշցի մը՝ Մէլիք չաուշի արճաճանէն ելնելով երկու քայլ դէպի վեր դանուող ռոմանացի խոհարարի խանութը կը մտնէ կերակուր ուտելու։ Այդ միջոցին երկու քիւրտ կուգան և երկու ծրար ծխախոտ կը դնեն ու կը մեկնին։ Բայց 5 վայրկեան յետոյ, ծրարներուն բերանները բացուած և ձեռքերնին բռնած կը վերադառնան և կուզեն բռնութեամբ յետ տալ և ստակը առնել, առարկելով թէ վոչնչացած է։ Խանութպան ռոմանացին կը պատասխանէ թէ իրաւունք չունին որովհետեւ ծխախոտը բէժիի է հոս և թէ ինչպէս որ ինքը կառնէ այնպէս ալ կը ծախէ և եթէ իրմէ դանդատ մ՚ունին, կրնան բէժիի վարչութեան դիմել. իսկ նոքա սոյն իրաւացի դիտողութենէն առաջ զգաստանալով մեկնելու տեղ, կըսկսին աւելի ազմուկ հանել և քրդերէն թրքերէն հայհոյանքներ տեղալ մարդոն գլխուն։ Քաղոր չաուշ, որ ինչպէս ըսինք կերակուր կուտէր և որ արդէն կը ճանչէր այդ Քիւրտերը, որպէս զի գործը դէշ կերպարանք մը չառնէ, կը սկսի մեղմաբար համոզել զիրենք և կը յաւելու թէ 40 փարայի համար ամօթ է այդպիսի խնդիրներ յարուցանել։ Ոոքա կը մեկնին առանց ծխախոտը յետ տալ կարողանալու. բայց կերեւի թէ ոխ կը պահեն Քաղոր չաուշին, իրենց կողմնակալութիւն ըրած չ՚ըլլալուն համար։ 10 վայրկեան յետոյ երբ Քաղոր չաուշ կերակուրը լմնցուցած, խանութէն դուրս կ՚ելնէ և հաղիւ քանի մը քայլ կառնէ դէպի սենեակը երթալու համար, ահա գաւազանի ահագին հարուած մը կընդունի ետեւէն. կը դառնայ և կը տեսնէ ծխախոտի խնդրոյն քիւրտերէն մին որ կը պատրաստուէր երկրորդ հարուած մ՚ալ իջեցնելու, անմիջապէս կը բռնէ գաւազանը ձեռքէն կառնէ և իրեն քիւրտին կիջեցունէ. ատոր վրայ անմիջապէս քիւրտերն իրենց սրճարանէն դուրս կը թափին, թուով 50ի չափ, վեցհարուածեան և դաշոյնները ի ձեռին։ Մէլիքի սրճարանի հայերն ալ գաւազաններով միայն կուզեն օգնութեան հասնիլ Քաղոր չաուշին։ Վերջապէս սարսափելի կռիւ մ՚է կըսկսի որ կը տեւէ ամբողջ ժամ մը։ Հոսկ ուրեմն զինուորները հասնելով, կարող կ՚ըլլան կռիւը դադրեցնել։ Բայց կռուին տեղը կը դանուի հայ մը կռնակէն դանակով զարնուած մեռած և 15 հայ վիրաւորեալ, որոնք անմիջապէս կառքերով հիւանդանոց կը փոխադրուին. հայերը հրացինով և դաշոյններով վիրաւորուած են, իսկ Քիւրտերը գաւազանի հարուածներով միայն։ Հարցաքննիչ դատաւորը իւր հարցաքննութիւնները դեռ կը շարունակէ մինչ այսօր և վատահ ենք որ ճշմարտութիւնը երեւան ելնելով, այդ աւազակաբարոյ քիւրտեր իրենց արդար պատիժը կ՚ընդունին, քանի որ Ռոմանիոյ պէս քաղաքակրթուած մի երկրի մէջ կը բնակինք։ Քիւրտեր արդէն որոշած և պատրաստուած են եղեր այդպիսի խնդիր մը յարուցանելու, յուսալով որ իրենք զինեալ, իսկ Հայերը անզէն և անպատրաստ գըտնուելով, կարող պիտի ըլլային լաւ ջարդ մը տալ անոնց։ Սակայն իրենց կարծածի հակառակը պատահեցաւ վասնզի իրենք թէ՛ աւելի շատ վիրաւոր թողուցին իրենցմէ կուռ վայրին վրայ և թէ՛ վերջապէս անզէն հայուն իրաւացի բարկութեան առջեւ չի կըրնալով դիմանալ, խայտառակ և դասալիք փախուստ տուին։

ՄԵՂՈՒ

ՀԱՅԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Պատրիարքական Տեղապահ Գեր. Հմայեակ Սրբազան հոկտ. 5/17ին Ոսմանիանութեան Դուռն երթալով տեսակցած է ոստիկանութեան նախարար Նազըմ փաշային հետ։

— Վսեմ. Պր. Կ. Եզեանց որ կաթինի Սանասարեան վարժարանին վերաբերեալ խնդիրների համար Կ.պոլիս կը գտնուէր, հոկտ. 6/18ին Կ.պոլսէն մեկներ է դէպի Ռուսիա։

— Նախորդ թուով հրատարակած էինք Ամերիկաի Նիւ Եորք քաղաքի առաջնակարդ հայ վաճառականներէն Տիար Յ. Ս. Թաւշանճեանին իր ամուսնութեան առթով արած նուիրատուութիւնները ազգային հաստատութիւններին։ Տիար Թաւշանճեան Կ.պոլսի մէջ ամուսնացած լինելով, պսակի արարողութիւնը կատարուած է հոկտ. 3/15ին Բէերաի Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ և նոյն օր նորապսակ ամուլք մեկնած են Կ.պոլսէն ցամաքային ճանապարհով դէպի Եւրոպա ուրկէ պիտի անցնին Ամերիկա։ Տիկին Թաւշանճեան (Ծընեալ Օրիորդ Ագաքսի Գ. Մուրատեան) խնամեալ դաստիարակութիւն առած է և Կ.պոլսի սերպական դեսպանատան քարտուղար-թարգման Պ՚եամ. Պր. Թէրխանի քեռորդին է։

— Պատրիարքական Տեղապահ Գեր. Հմայեակ Սրբազան չնորհակալութեան դիր ղրկեր է երդնկա Տիար Համբարձում Լեփեանի որ քօլերայի ժամանակ մարդասիրաբար բժիշկներ յատկացունելով աղքատ հիւանդներին և ձրիապէս դեղեր մատակարարելով անոնց, հարիւրաւոր անձերի կեանքն ազատած է։

ՄԱՐՍԷյԼԻ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆՈՐ ՀԻՒՊԱՏՈՍԸ

Մարսէյլի հայ գաղթականութեան անդամներէն Մհմ. Տիար Սիմէոն Միրզայեանց Պարսկաստանի հիւպատոս նշանակուած է Մարսէյլի մէջ և իր պաշտօնավարութիւն հաճութեամբ ընդունուած լինելով Ֆրանսայի կառավարութենէն, գործադրութեան հրամանագիրը (exequatur) յանձնուած է իրեն։

Կը շնորհաւորենք Տիար Միրզայեանցի այս նոր պաշտօն։

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ՊԱՏԿԵՐԸ

Ինչպէս նշմարած կը լինին մեր հետաքրքիր ընթերցողները ծանուցումներէ բաժնին մէջ, վիէննայի Մխիթարեան Պատ. Միաբանութիւնը հաճած է Պարսկաստանի Հայերին համար մի ղեղչ անել հայ լրագրութեան դարադարձին առթով իր հրատարակած պատկերի գնին վրայ։ Այդ պատկերը՝ որ իր մէջտեղ կը պարունակէ հայ լրագրութեան հիմնադրին, Տ. Յարութիւն Քհ. Շմաւոնեանի պատկերը և անոր բոլորտիքը՝ այժմ հրատարակուող 31 հայ թերթերի անուններըը, իրենցմէ 19ի խմբագիրներին լուսատիպ պատկերներով մէկտեղ, Պարսկաբնակ Հայերին համար կը ծախուի 2 ֆրանգ և 50 սանթիմի (կամ 1 ըբլ. ռուսական), փոստի ծախքն ալ միասին հաշուելով. մինչդեռ ուրիշ տեղերի համար 4 ֆրանգ է, փոստի ծախքովը մէկտեղ։

ԹԻՒՐՔԻԱՅԷՆ ԼՈՒՐԵՐ

Կ.պոլսի ռուսական դեսպան Պր. Նելիւոֆ որ Լիվատիա դնացած էր իր վիհապետի մօտ, Կ.պոլիս վերադարձած է։ Իր տուած տեղեկութեան նայելով, յուսահատական չէ Զարլին վիճակը։

— Կ.պոլսի Levant Herald և Stamboul լրագիրները բարձրագոյն հրամանով դադարման գատապարտուեր են անպայման ժամանակով, առանց գրաքննիչի գիտութեան ինչ ինչ հրատարակութիւններ արած լինելնուն համար։

— Սուլթանի մէկ նոր իրատէին համեմատ, վանի, Բաղէշի, կարինի և Սեբաստիոյ նահանգներին մէջ համապատասխան հեռագրատուներ 18 նոր գործեր ալ կազմուելով աւելցուեր են արդէն եղածներուն վրայ որոնք կարծես թէ դեռ բաւական չեն համարուած այդ նահանգների դժբազդ ժողովուրդները թշուառացունելու համար։

— Կ.պոլսի ալմանական դեսպան Ռատօլին իշխանը հոկտ. 3/15ին Կ.պոլսէն մեկնած է արձակուրդով, Պերլինի մէջ ներկայ դանուելու համար իր երկու նորածին երկուորեակ թոռնեղբի մկրտութեան հանդիսին որոնց կնքահայր պիտի լինի Վիլհելմ կայսրը։

ԶԱՐՔՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Ղերլին լուրերին նայելով, թէեւ Ալեքսանդր կայսրի ժամը անխուսափելի կը համարուի, բայց հիւանդութեան ցաւերը մի քիչ մեղմացած են այս օրեր։ Երիկամունքի բորբոքման հիւանդութեան մէջ կը պատահին այդպէս երբեմն մեղմ և երբեմն սաստիկ ժամանակամիջոցներ։

Երբեակ դաշնակցութեան պատկանող երկիրներէ լրագիրներէն ոմանք գրեցին թէ Զարը թունաւորուած է և բժիշկներն ալ խոտոված նած են այդ։ Այդ լուր սխալ է բոլորովին. թէեւ թունաւորման խնդիր կայ, բայց ո՛չ թէ դրսէն թոյն արուած է իրեն, այլ ինֆլուէնցաէն յետոյ Զարին ղժուարութիւն չտնելով աշխատիլ և յոդնիլը զինք տկարացուցած և արիւնը ապականած է. հիւանդութիւնը թոյնի աղդեցութիւնն ունեցած է իր մարմնի վրայ ապականուած արեան միջոցով։

Հիմա, կը գրեն թէ Զարէն աւելի վտանգալի վիճակի մէջ կը դանուի իր զաւակի Գէորգ Մեծ դքսի կեանքը որ արդէն թոքախտէն հիւանդ լինելով, Կովկաս Սուրամ քաղաքին մէջ կը խնամուէր. իսկ այժմ Լիվատիա մէջ իր հօր անկողնին մօտ կրած յուզումներէն սաստիկ ջախուած լինելով Կովկաս վերադարձուեր է։ Նոյնպէս Զարուհին իր ամուսնի մեծ անքուն հսկելէն և խնամելէն տկարացած, յանդրապէս հիւանդացեր և ուրիշների խնամքին ինք ենթարկուելը է այժմ։

Զարեւիչ ինչպէս ծանուցանեցինք, Հեսի Ալիս իշխանուհին, Լիվատիա դնացեր է։ Զա-

րը ուզեր է զինք տեսնել մեռնելէն առաջ, իր օրհնութիւնները տալու համար. պատուիրեր է որ չատ չուշացունեն Զարեհիէի ամուսնութեան հանդէսը։

Զարը իր գահաժառանգ որդիին իբրեւ կատակ աւանդած խրատներին մէջ, պատուիրեր է, ի միջի այլոց, որ չմոռնայ հոգւով մարմնով ռուս ճնալ միշտ և թէև ուրիշ աղգերի համակրութիւնն ու բարեկամութիւնը չհեղու ջանադիր դանուի, բայց ամեն բանէ վեր համարի Ռուսիան չհերը և ամեն բան անոնց համեմատ կարգադրէ միշտ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԺԹ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ (ԶԱՔԱՐԻԱ ՍԹՈՑԱՆՈՎ)

ՖԱՆՍԻԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1894

Պուլկարիոյ անկախութեան հերոսներէ մէկին, Զաքարիա Սթոյանովի, որ իր ընդունակութեան և հայրենասիրական ոգեւորութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ գիւղացի հովուի պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վարժապետ, յեղափոխական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիոյ Ազգային ժողովին նախագահ դառնալ խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան նաեւ Պուլկարիոյ Թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուլկար հայրենասէր յեղափոխականներու գործունէութեանը մասին։ Սկիզբը գրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լբժէի, և Թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն Թարգմանութեանն առթով։

Հեղինակը չատ իրաւամբ կը գրէ իր յառաջաբանի վերջ թէ «Զարմանք պիտի պատճառէ ինձ նէթէ ընթերցողներէ հետաքրքրութիւնը չարժի պետական մարդ դարձած մի գիւղացու այս վաւերական պատմութեան վրայ։»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ։

Տարածելու համար մեծ քանակութեամբ առնողներին 25 % զեղչ կը տրուի։

(Պարսկաստանի Հայերին համար 1 ֆրանգ է։)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ Է ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ (1794–1894) ՅՈՒԲԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Այս պատկեր որ «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնը հրատարակած է ներկայ 1894 թուականի Հայ աղգին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձը լինելուն առթով, մեծ միաձալ դիրքով է լուսատիպ (photographique), որի մեծութիւնն է 50 × 35 սանտիմեար, տպուած 70 × 45 սանտիմեար քարտոնի (carton) վրայ այլ և այլ բնագրով։ Մէջ տեղը դրուած է հայ լրագրութեան հիմնադրին՝ Տ. Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի պատկերը, և բոլորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագիրները իրենց խմբագրապետներու պատկերներով։

Գինն է 1 բբլ. 50 կպկ. կամ 4 ֆրանգ, ճանապարհածախսով միասին։ Պարսկաստանի համար 1 րբլ. ռսկ. կամ 2 ֆր. եւ 50 սնթմ.

Սոյն առթիւ կը յայտնենք որ լոյս տեսած է նաեւ

Գալէմքեարեան Հ. Գ., Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը։ Հար. Ա. 1794-1860. մէկ լուսատիպ պատկերով։ Վիէննա Մխիթարեան տպարան 1893։ Գին՝ ճանապարհածախսով՝ բբլ. 1 կամ 2 ֆր. և 50 սանթիմ։

Վերոգրեալ պատկերն ու գիրքը ստանալու համար, դիմել Վիէննա Մխիթարեան Պատուարժան Միաբանութեան որ հրատարակած է զանոնք։

Կարելի է նաեւ ստանալ զանոնք, դիմելով Արմենիոյ խմբագրութեան։

ՀԱՑՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ա

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայերէ իրենց չրջանի մէջ տարածել այս տետրակ։ Մէկ անդամէն 50 օրինակ ծախու առնողին կը տրուի 5 ֆրանքով Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ)։

Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմենիոյ միջոցով մէկի դիմում անել կամ մի բան յայտարարել, պատրաստ ենք ընդունելէրենց ծանուցումներ ըստ, լրագրական սովորութեան։ Ծանուցումների գիները նշանակուած են Արմենիոյ ճակատը, տառին վրայ հաշուելով. 1 երկաթագրի (գլխագիր) համար 2 սանդիմ և 1 բոլորգրի համար 1 սանդիմ։ 3 անգամ դրուելիք ծանուցումի գինին վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնի վրայ 0/0ի 30 զեղչ։ Սակարկութիւն չընդունուիր։

Նշանակ Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանաչ, կապոյտ և դեղին գոյներով ներկուած։ 1 ֆրանգ։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սրբազանի պատկերը ընտիր թղթի վրայ պղտուած կը ծախուի Արմենիոյ խմբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ ժամանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովը։

Ա. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ Մը (Սպառած)։

Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԴՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՕՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտպանութեան տեսակ հետեւեալ քներէ մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՔԱՔԻՊԱ — ԾՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ ալբուբեցճ աւարտելոց (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած տպատաչունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ ՏՃՓԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻ ԱԶԳԵՐՈՒ ՎՐԱՅ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՑԵՂԱՔԱՆԱԿԱՆ ԱՄՓՈՓ ԵՒ ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ։ Թիւրքահայաստանի մէջ ԲԸՆԱԿՈՂ այլ և այլ ազգերէ բնակիչներու թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գինն 50 սանթիմ (35 սանթիմ)։

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՑՈՒՇԱՐԱՐ (Արմենիոյ Ա տարեշրջանի Թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ չրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են ցուցարարիմէջ որ ուրիշ ազգերու դիրքով 124 երեսներէ կը բազկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ Թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթմ.) ,20 սնթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՑԱՐԻՍ (Ցունաստանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն նոյնպէս մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ Թէ Յոյներն ի՛նչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) ,20 սանթիմ։

ԺԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իրեւ նմոյշներ զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւններու տակ իւրաքանչիւրէն գրած ոտանաւորներէն որոնք ժամանակին հրատարակուած չ'լինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրրեւ նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տպագրուած ազգային երգարաններուն մէջ՝ որոց վերջին տպագրութիւնն վաղուց արդէն արդիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներուն մէջ։ Նմոյշներու մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ Թէ այդ ոտանաւորները ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 սանթիմ) 15 սանթիմ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵՍԱՐԷՆ Ա ԻՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԱԶԱՒՈՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի Թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքների պատճառ դարձած է և վերջ է վերջոյ ինք ալ իւր որդւոյ ձեռքով սպանուած և անհետացած է աշխարհէ։ Գին 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : François CARRIÈRE

ՄԱՐՍԷՑԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi.
Allées de Meilhan, 44.